ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար

Դ.Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան,

Ձեզ է ներկայացվում Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի և կից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին /Կ-**840**-03.05.2024-ՊԱ-011/01/ նախագծի վերաբերյալ «Հայաստան» խմբակցության գրավոր առաջարկները՝ գլխադասային հանձնաժողովի նախագահին և հիմնական զեկուցողին ներկայացնելու նպատակով:

Առդիր՝ 3 էջ

Հարգանքով՝ Ս.Օհանյան

27.08.2024թ.

Առաջարկություն

«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի (Կ-480-03.05.2024-ՊԱ-011/1) և կից օրենքների նախագծի փաթեթի վերաբերյալ

Առաջարկվում է.

1) Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.
«6) պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը.»:

2) Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12. 1-ին հոդվածով.

«Հոդված 10. Ոստիկանության գվարդիայի լիազորությունները Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելիս

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելիս ոստիկանության գվարդիան լիազորված է.
   1) մասնակցել զինված ուժերի՝ իրենց մասով կիրառման պլանների մշակմանը և ապահովելու դրանց կիրառումը.

Հիմնավորում

«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծով ոստիկանության զորքերի հենքի վրա ստեղծվում է ոստիկանության նոր ստորաբաժանում, որը գործելու է բացառապես քաղաքացիական կառավարման և խորհրդարանական վերահսկողության ներքո:

«Ոստիկանության զորքերի մասին» գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ոստիկանության զորքերի խնդիրների թվում, ի թիվս այլոց նախատեսված է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը: Օրենքի նախագծով ոստիկանության գվարդիան այլևս չի մասնակցելու Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Դա ըստ նախագծի հիմնավորման պատճառաբանվում է նրանով, որ ինչպես ոստիկանության զորքերը, այնպես էլ դրանց ծառայողները ունեն երկակի կարգավիճակ: Բացի այդ, այս ծառայությանը բնորոշ է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անվտանգության գործառույթների զուգակցումը, ինչը չի բխում ոստիկանության ընդհանուր խնդիրներից: Մինչդեռ, մեր երկրի առջև կանգնած մարտահրավերների պարագայում, ճիշտ և տեղին կլիներ, որ ոստիկանության գվարդիան ևս մասնակցեր Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, առավել ևս, որ այն ռազմականացված ուժային ստորաբաժանում է լինելու և տարբեր երկրներում առկա համանման կառույցները մասնակցում են տվյալ երկրի պաշտպանությանը (օրինակ՝ Ազգային գվարդիան ՌԴ-ում)

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N

26.08.2024

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի և կից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-840-03.05.2024-ՊԱ-011/01) նախագծի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Ս. Օհանյան